եւ շատերի հեղձամահ լինելը: Նոյնպէս Եւրոպացի մի քանի ճանապարհորդներ, ինչպէս Տաւվէրնիէ 1655ին, Շարդէն 1673ին եւ Տուրնեֆոր 1700ին, նաւակներով անցան Երասխին եւ ոչ մի կամուրջ չտեսան:

Ահա ինչ է ասում Շարդէն:

"Երասխ այն հռչակաւոր գետն է, որ բաժանում է Հայաստանը Մեդիայից (Ատրպատականից): Այդ գետը մեծ է եւ շատ արագ: Նա ուռչում է իր հոսանքի ընթացքում շատ փոքր վտակներով եւ հեղեղներով: Ջանապան ժամանակ նրա վրայ կամուրջներ են շինել Ջուղայից վերեւ ու ուրիշ տեղեր, բայց որքան ամուր եւ հաստ են եղել, ինչպէս երեւում է դեռ մնացած կամարներից, չեն կարողացել դիմադրել գետի հոսանքին: Այնքան կատաղի էր, երբ մծտակայ սարերի ձիւնի հալուելով մեծանում էր, որ ո՛չ մի թումբ, ո՛չ մի շինութիւն չէր մնում: Մենք անցանք Երասխը մի մեծ նաւակով, որ 20 ձիի եւ 30 մարդի անցնելու համար էր շինուած: Ջմեռը, երբ ջուրը քիչ է, սուղտերով են անցնում. ծանծաղուտն ջուլֆից կէս մղոն է, մի տեղ, որ շատ լայն է, ուսսի եւ հանդարտ է հոսում":

Այսպէս ուրեմն Հին-Ջուղան՝ թէեւ շինուած անապատ տեղում, զուրկ բուսականութիւնից եւ աւազուտ՝ մի գեղեցիկ տեղ չէր կարող լինել, բայց ԺԶ. եւ ԺԷ. դարում նա մի հռչակեալ եւ ծաղկեալ վաճառականական քաղաք էր, ինչպէս վկայում են եւ եւրոպացի շատ ճանապարհորդներ — Տաւվէրնիէ[1], Շարդէն[2],

---

1 Tavernier, Six voyages, 1. c. I. ed. 1718.

2 Chardin, Voy. en Perse, Amsterdam 1735.